ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 26.12.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/94

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ՝ Արմեն Պետրոսյան Սերյոժայի Ա/Ձ-ի ներկայացուցիչներ՝

Հ. Ենգոյանի (լիազորագիր, տրված՝ 19.12.2019թ.)

Ա. Պարանյանի (լիազորագիր, տրված՝ 19.12.2019թ.)

«Ուկռինվեստ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Ա. Մկրտչյանի (լիազորագիր, տրված՝ 24.12.2019թ.)

քննելով ՀՀ ոստիկանության կարիքների համար ճանապարհային նշանների տեղադրման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ Ո ՀԲՄԾՁԲ-2020-ՃՈ/ՆՇԱՆ-20» ծածկագրով հրատապ բաց մրցույթի շրջանակներում Արմեն Պետրոսյան Սերյոժայի Ա/Ձ-ի կողմից 19.12.2019թ. ներկայացված (20.12.2019թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2019/94 բողոք), պարզեցի հետևյալը.

1. **<u>Արմեն Պետրոսյան Սերյոժայի Ա/Ձ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

Արմեն Պետրոսյան Սերյոժայի Ա/Ձ-ն (հետայսու նաև՝ Բողոքաբեր) 19.12.2019թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ ՀՀ ոստիկանության կարիքների համար «Ճանապարհային նշանների տեղադրման ծառայությունների» ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ Ո ՀԲՄԾՁԲ-2020-ՃՈ/ՆՇԱՆ-20» ծածկագրով հրատապ բաց մրցույթ (հետայսու նաև՝ Ընթացակարգ):

«ՀՀ Ո ՀԲՄԾՁԲ-2020-ՃՈ/ՆՇԱՆ-20» ծածկագրով հրատապ բաց մրցույթի հայտերի բացումը նշանակված է 20.12.2019թ.:

Համաձայն Ընթացակարգի հրավերի «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի» գնման առարկայի՝ «Երևան քաղաքում ճանապարհային նշանների տեղադրման ծառայության մատուցման» համար (մեկ չափաբաժնով) սահմանվել են հետևյալ տեխնիկական պարամետրերը.

Ճանապարհային նշանի կանգնակի պատրաստում և տեղադրում -Կանգնակը պետք է պատրաստված լինի 57մմ տրամագծով, 3-4մմ պատով նոր, չօգտագործված երկաթյա խողովակից, ներկված՝ մոխրագույն հակակոռոզիոն ներկով, բարձրությունը՝ 3,5-4,5մ, տեղադրումը պետք է իրականացվի Բ-15 դասի 0,128մ3 բետոնով: Կանգնակները տեղակայվում են երթևեկելի մասից աջ, երթևեկելի մասի եզրից /կողնակի առկայության դեպքում/ մինչև երթևեկելի մասի կողքին տեղակայված նշանի եզրը եղած հեռավորությունը պետք է լինի 0,5-2մ: Ծառայությունը պետք է մատուցվի համաձայն ՀՀ կառավարության 29/06/2006թ. "Ճանապարհային երթևեկության կազմակերպման կարգը հաստատելու մասին" N 1206-Ն որոշման պահանջներին համապատասխան:

Եռանկյունի ճանապարհային նշանի պատրաստում և տեղադրում - Եռանկյունի նշանը պետք է պատրաստված լինի 0,8մմ հաստությամբ ցինկապատ թիթեղից, բարձր լուսային ինտենսիվություն ունեցող լույս անդրադարձնող Ճ դասի միկրոպրիզմատիկ փայլաթերթից հումքը՝ակրիլ, լույս անդրադարձելիությունը՝ ոչ պակաս 60%, երաշխիք՝ 10 տարի, աշխատանքային ջերմաստիճանը՝ -40°C- +80°C/, վերոնշյալ տեխնիկական բնութագրին

համապատասխան վկայագրի առկայություն, չափսերը՝ 90*90*90 սմ, բարձրությունը՝ 70սմ:

Եռանկյունի նշանը պետք է տեղադրվի արդեն իսկ գոյություն ունեցող կանգնակի կամ արտաքին լուսավորության հենասյան վրա՝ երթևեկելի մասի հարթությունից 2մ բարձրությամբ: Նշանները տեղակայվում են երթևեկելի մասից աջ, երթևեկելի մասի եզրից /կողնակի առկայության դեպքում/ մինչև երթևեկելի մասի կողքին տեղակայված նշանի եզրը եղած հեռավորությունը պետք է լինի 0,5-2մ: Երթևեկելի մասի աջ կամ ձախ կողմում գտնվող նշանների տեղակայման բարձրությունը պետք է լինի երթևեկելի մասի ճանապարհի ծածկույթի մակերևույթից 2-4մ: Մեկ հենարանի վրա տարբեր խմբի նշանների տեղադրման դեպքում հերթականությունը սահմանվում է վերևից ներքև՝ 1. առավելության նշաններ 2.նախազգուշացնող նշաններ 3. թելադրող նշաններ 4. հատուկ թելադրանքի նշաններ 5. արգելող նշաններ 6. տեղեկատվության նշաններ 7. սպասարկման նշաններ: Մեկ հենարանի վրա տեղակայված նշանների եզրերի միջև հեռավորությունը պետք է լինի 50մմ: Ծառայությունը պետք է մատուցվի համաձայն ՀՀ կառավարության 29/06/2006թ. "Ճանապարհային երթևեկության կազմակերպման կարգը հաստատելու մասին" N 1206-Ն որոշման պահանջներին համապատասխան:

Կլոր և քառակուսի ճանապարհային նշանի պատրաստում և տեղադրում - Քառակուսի կամ կլոր ճանապարհային նշանը պետք է պատրաստված լինի 0,8մմ հաստությամբ ցինկապատ թիթեղից, բարձր լուսային ինտենսիվություն ունեցող լույս անդրադարձնող Ճ դասի միկրոպրիզմատիկ փայլաթերթից հումքը՝ակրիլ,լույս անդրադարձելիությունը՝ ոչ պակաս 60%, երաշխիք՝ 10 տարի, աշխատանքային ջերմաստիճանը՝ -40°C- +80°C/, վերոնշյալ տեխնիկական բնութագրին համապատասխան վկայագրի առկայություն, քառակուսի նշանի չափսերը՝ 70*70սմ, կլոր նշանի չափսերը՝ d-70սմ: Քառակուսի կամ կլոր նշանը պետք է տեղադրվի արդեն իսկ գոյություն ունեցող կանգնակի կամ արտաքին լուսավորության հենասյան վրա՝ երթևեկելի մասի հարթությունից 2մ բարձրությամբ: Նշանները տեղակայվում են երթևեկելի մասից աջ , երթևեկելի մասի եզրից /կողնակի առկայության դեպքում/ մինչև երթևեկելի մասի կողքին տեղակայված նշանի եզրը եղած հեռավորությունը պետք է լինի 0,5-2մ: Երթևեկելի մասի աջ կամ ձախ կողմում գտնվող նշանների տեղակայման բարձրությունը պետք է լինի երթևեկելի մասի ճանապարհի

ծածկույթի մակերևույթից 2-4մ: Մեկ հենարանի վրա տարբեր խմբի նշանների տեղադրման դեպքում հերթականությունը սահմանվում է վերևից ներքև՝ 1. առավելության նշաններ 2. նախազգուշացնող նշաններ 3. թելադրող նշաններ 4. հատուկ թելադրանքի նշաններ 5. արգելող նշաններ 6. տեղեկատվության նշաններ 7. սպասարկման նշաններ: Մեկ հենարանի վրա տեղակայված նշանների եզրերի միջև հեռավորությունը պետք է լինի 50մմ: Ծառայությունը պետք է մատուցվի համաձայն ՀՀ կառավարության 29/06/2006թ. "Ճանապարհային երթևեկության կազմակերպման կարգը հաստատելու մասին" N 1206-Ն որոշման պահանջներին համապատասխան:

Լրացուցիչ տեղեկատվության նշանի (աղյուսակի) պատրաստում և տեղադրում - Լրացուցիչ տեղեկատվության ճանապարհային նշանը պետք է պատրաստված լինի 0,8մմ հաստությամբ ցինկապատ թիթեղից, բարձր լուսային ինտենսիվություն ունեցող լույս անդրադարձնող Б դասի միկրոպրիզմատիկ փայլաթերթից հումքը՝ակրիլ,լույս անդրադարձելիությունը՝ ոչ պակաս 60%, երաշխիք՝ 10 տարի, աշխատանքային ջերմաստիճանը՝ -40°C- +80°C/, վերոնշյալ տեխնիկական բնութագրին համապատասխան վկայագրի առկայություն, չափսերը՝ 70*35սմ: Լրացուցիչ տեղեկատվության ճանապարհային նշանը տեղադրվում է հիմնական ճանապարհային նշանի հետ միասին արտաքին լուսավորության հենասյան կամ կանգնակի վրա՝ երթևեկելի մասի հարթությունից 2մ բարձրությամբ: Նշանները տեղակայվում են երթևեկելի մասից աջ, երթևեկելի մասի եզրից /կողնակի առկայության դեպքում/ մինչև երթևեկելի մասի կողքին տեղակայված նշանի եզրը եղած հեռավորությունը պետք է լինի 0,5-2մ: Երթևեկելի մասի աջ կամ ձախ կողմում գտնվող նշանների տեղակայման բարձրությունը պետք է լինի երթևեկելի մասի ճանապարհի ծածկույթի մակերևույթից 2-4մ: Մեկ հենարանի վրա տարբեր խմբի նշանների տեղադրման դեպքում հերթականությունը սահմանվում է վերևից ներքև՝ 1. առավելության նշաններ 2. նախազգուշացնող նշաններ 3. թելադրող նշաններ 4.հատուկ թելադրանքի նշաններ 5.արգելող նշաններ 6.տեղեկատվության նշաններ 7. սպասարկման նշաններ: Մեկ հենարանի վրա տեղակայված նշանների եզրերի միջև հեռավորությունը պետք է լինի 50մմ: Ծառայությունը պետք է մատուցվի համաձայն ՀՀ կառավարության 29/06/2006թ.

"Ճանապարհային երթևեկության կազմակերպման կարգը հաստատելու մասին" N 1206-Ն որոշման պահանջներին համապատասխան:

1.34.1 , 1.34.2 ,1.34.3 ,8.22.1 , 8.22.2, 8.22.3 ճանապարհային նշանների պատրաստում և տեղադրում - 1.34.1, 1.34.2, 1.34.3, 8.22.1, 8.22.2 , 8.22.3 ճանապարհային նշանը պետք է պատրաստված լինի 0,8մմ հաստությամբ ցինկապատ թիթեղից, բարձր լուսային ինտենսիվություն ունեցող լույս անդրադարձնող Б դասի միկրոպրիզմատիկ փայլաթերթից հումքը՝ակրիլ,լույս անդրադարձելիությունը՝ ոչ պակաս 60%, երաշխիք՝ 10 տարի, աշխատանքային ջերմաստիճանը՝ -40°C- +80°C/, վերոնշյալ տեխնիկական բնութագրին համապատասխան վկայագրի առկայություն, նշանի չափսերը՝ 142*50սմ:1.34.1, 1.34.2,1.34.3,8.22.1, 8.22.2, 8.22.3 նշանը պետք է տեղադրվի արդեն իսկ գոյություն ունեցող կանգնակի կամ արտաքին լուսավորության հենասյան վրա՝ երթևեկելի մասի հարթությունից 2մ բարձրությամբ: Նշանները տեղակայվում են երթևեկելի մասից աջ, երթևեկելի մասի եզրից /կողնակի առկայության դեպքում/ մինչև երթևեկելի մասի կողքին տեղակայված նշանի եզրը եղած հեռավորությունը պետք է լինի 0,5-2մ: Երթևեկելի մասի աջ կամ ձախ կողմում գտնվող նշանների տեղակայման բարձրությունը պետք է լինի երթևեկելի մասի ճանապարհի ծածկույթի մակերևույթից 2-4մ: Մեկ հենարանի վրա տարբեր խմբի նշանների տեղադրման դեպքում հերթականությունը սահմանվում է վերևից ներքև՝ 1. առավելության նշաններ 2. նախազգուշացնող նշաններ 3. թելադրող նշաններ 4. հատուկ թելադրանքի նշաններ 5. արգելող նշաններ 6. տեղեկատվության նշաններ 7. սպասարկման նշաններ: Մեկ հենարանի վրա տեղակայված նշանների եզրերի միջև հեռավորությունը պետք է լինի 50 մմ: Ծառայությունը պետք է մատուցվի համաձայն ՀՀ կառավարության 29/06/2006թ. "Ճանապարհային երթևեկության կազմակերպման կարգը հաստատելու մասին" N 1206-Ն որոշման պահանջներին համապատասխան:

5.15.1 ճանապարհային նշանի պատրաստում և տեղադրում - 5.15.1 ճանապարհային նշանը պետք է պատրաստված լինի 0,8մմ հաստությամբ ցինկապատ թիթեղից, բարձր լուսային ինտենսիվություն ունեցող լույս անդրադարձնող Б դասի միկրոպրիզմատիկ փայլաթերթից հումքը՝ակրիլ,լույս անդրադարձելիությունը՝ ոչ պակաս 60%, երաշխիք՝ 10 տարի, աշխատանքային ջերմաստիճանը՝ -40°C- +80°C/, վերոնշյալ տեխնիկական

բնութագրին համապատասխան վկայագրի առկայություն, 5.15.1 չափսերը՝ 142*70սմ: 5.15.1 նշանը պետք է տեղադրվի արդեն գոյություն ունեցող2 զուգահեռ ճոպանների միջև, ամրացվում է ներքևից և վերևից: Ծառայությունը պետք է մատուցվի համաձայն ՀՀ կառավարության 29/06/2006թ. "Ճանապարհային երթևեկության կազմակերպման կարգը հաստատելու մասին" N 1206-Ն որոշման պահանջներին համապատասխան:

…:

Սֆերիկ հայելու պատրաստում և տեղադրում - Սֆերիկ հայելու տրամագիծը պետք է լինի 1200մմ, ուռուցիկ: Սֆերիկ հայելու շրջակալը պետք է պատրաստված լինի 20*42մմ չափսի նոր, չօգտագործված երկաթե խողովակից, ներկված՝ հակակոռոզիոն ներկով, իսկ հետևի պատյանը պետք է պատրաստված լինի նվազագույնը 1մմ հաստությամբ ցինկապատ թիթեղից, ներկված հակակոռոզիոն ներկով: Սֆերիկ հայելին պետք է կոմպլեկտավորված լինի ամրացման դետալներով, որը պետք է ապահովի 45 աստիճան պտույտ և ֆիքսում հորիզոնական և ուղղահայաց դիրքերով: Պետք է պատրաստված լինի 76*3-4մմ նոր, չօգտագործբած երկաթյա խողովակից, ներկված՝ մոխրագույն հակակոռոզիոն ներկով, բարձրությունը՝ 5մ, տեղադրումը՝ Բ-15 դասի 0,2մ3 բետոնով: Ծառայությունը պետք է մատուցվի համաձայն ՀՀ կառավարության 29/06/2006թ. "Ճանապարհային երթևեկության կազմակերպման կարգը հաստատելու մասին" N 1206-Ն որոշման պահանջներին համապատասխան…:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2)պայմանագրի կնքման նպատակովմասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը…:

Բողոքաբերը գտնում է, որ «ՀՀ Ո ՀԲՄԾՁԲ-2020-ՃՈ/ՆՇԱՆ-20» ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի կողմից հրավերը կազմելիս՝ թույլ է տրվել Օրենքի վերոշարադրված պահանջների խախտում: Օրինակ՝

1. Եռանկյունի նշանը պետք է պատրաստված լինի 0,8 մմ հաստությամբ ցինկապատ թիթեղից, բարձր լուսային ինտենսիվություն ունեցող լույս անդրադարձնող Ճ դասի միկրոպրիզմատիկ փայլաթերթից հումքը՝ ակրիլ, լույս անդրադարձելիությունը՝ ոչ պակաս 60%,

- երաշխիք՝ 10 տարի,
- աշխատանքային ջերմաստիճանը՝ -40°C- +80°C/:

Երաշխիքի 10 տարվա և -40°C- +80°C աշխատանքային ջերմաստիճանի հետ կապված Բողոքաբերը հայտնել է հետևյալը. Պատվիրատուն վերը նշված պահանջների հիմնավորման համար պահանջել է ներկայացնել տեխնիկական բնութագրին համապատասխան վկայագիր, մինչդեռ օրինակ՝ անհասկանալի է, թե ՀՀ-ում երբևէ գրանցվել է -40°C համարժեք սառնամանիք, կամ +80°C համարժեք անմարդկային տաք օրեր, որի պայմաններում Պատվիրատուն հրավերով սահմանել է -40°C- +80°C աշխատանքային ջերմաստիճան՝ դեռ ավելին, պահանջել ներկայացնել նաև համապատասխան վկայագիր:

2. Ուսումնասիրելով հրավերով սահմանված տեխնիկական բնութագիրը՝ ակնհայտ է դառնում, որ անհրաժեշտ է և՛ ճանապարհային նշանների պատրաստում և մատակարարում, և ճանապարհային նշանների տեղադրում և այս ամենը խմբավորել մեկ գնումների միասնական անվանասյունակով նախատեսված CPV կոդի ներքո, այն է՝ 45231213:

Այս հանգամանքի հետ կապված Բողոքաբերը հայտնել է հետևյալը. Պատվիրատուի կողմից հայտարարվել է 1 չափաբաժնից բաղկացած մրցույթ, որի մեջ ներառվել են ճանապարհային նշանների մատակարարում և ճանապարհային նշանների տեղադրում,

այնինչ գնումների միասնական անվանասյունակով նախատեսված CPV կոդերի համաձայն վերը նշված գնումները տարանջատվում են առանձին սյունակներով և ունեն առանձին CPV կոդեր՝

-Ճանապարհային նշանների մատակարարում - CPV կոդ 34921410:

-Ճանապարհային նշանների տեղադրում - CPV կոդ 45231213:

3. Հրավերով սահմանվել է հետևյալը՝ սույն հրավերով նախատեսված ծառայությունների մատուցման համար պահանջվում են հետևյալ լիցենզիաները՝ «Քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացում» ըստ հետևյալ ոլորտի՝ բնակելի հասարակական և արտադրական /բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների/:

Վերը նշվածի հետ կապված Բողոքաբերը հայտնել է հետևյալը՝ Պատվիրատուն հրավերով պահանջել է, որ մասնակից ընկերությունը մասնակցությունն ապահովելու համար պետք է ունենա լիցենզիա՝ «Քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացում» ըստ հետևյալ ոլորտի՝ բնակելի հասարակական և արտադրական, մինչդեռ եթե ուսումնասիրում ենք նույն հրավերով սահմանված տեխնիկական բնութագիրը՝ ակնհայտ է դառնում, որ տվյալ մրցույթի շրջանկում մասնակիցը օրինակ՝ պետք է պատրաստի ճանապարհային նշանի կանգնակ, պատրաստի եռանկյունի ճանապարհային նշան, պատրաստի կլոր և քառակուսի ճանապարհային նշան, պատրաստի Տեղեկատվության նշանի (շիթ) և այսպես շարունակ, մինչդեռ հարց է առաջանում՝ այս նշանները պատրաստելու համար ինչի համար է պարտադիր «Քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացում» ոլորտի լիցենզիան: Այս պարագայում Պատվիրատուն պարտավոր էր մրցույթը հայտարարել մի քանի չափաբաժիններով և առանձնացներ այն չափաբաժինները, որոնց շրջանակներում պետք է կատարվեն «Քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացում» ոլորտի շրջանակներում կատարվող աշխատանքներ և միայն այդ աշխատանքների պարագայում ներկայացներ համապատասխան լիցենզիան, մինչդեռ չտարանձատելով չափաբաժինների ստացվում է մի իրավիճակ, որ մասնակից Ընկերությունը ճանապարհային նշաններ արտադրելու համար պետք է ունենա Քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացում» ոլորտի լիցենզիա:

Ամփոփելով վերը նշված փաստերն ու փաստական հանգամանքները՝ Բողոքաբերը գտնում է, որ Ընթացակարգի հրավերով ապրանքի տեխնիկական բնութագիրը նկարագրված է հնարավորինս մանրամասն, սակայն խնդիրը նրանում է, որ առանձին բաղադրիչները և դրանց հնարավորությունների պարամետրերում ներկայացված են այնպիսի պահանջեր (որոշ դեպքերում առանց շեղման), որոնք այլընտրանքի հնարավորություն չեն տալիս, ավելին մրցույթը հայտարարվել է 1 չափաբաժնով՝ մինչդեռ հրավերով անհրաժեշտ էր նախատեսել առնվազն մի քանի չափաբաժին՝ իրենց համապատասխան CPV կոդերով, առանձին տեխնիկական բնութագրերով, ինչպես ոչ իրավաչափ է սահմանել «Քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացում» ոլորտի լիցենզիա՝ չնայած որ պետք է արտադրվի ճանապարհային նշաններ՝ և հենց այս հանգամանքները հաշվի առնելով ենթադրվում է, որ այդ պահանջները սահմանելիս՝ պատվիրատուն հիմք է ընդունել որևէ կոնկրետ ֆիրմային համապատսխանող տվյալներ, մինչդեռ օրինակ մեր Ընկերության կողմից առաջարկվող արտադրանքը լիովին կարող են ապահովել պատվիրատուի կողմից ակնկալվող արդյունքները:

Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, ապա բողոքը ներկայացվում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը:

Նույն հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» պարբերության համաձայն՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման:

Հաշվի առնելով, որ Ընթացակարգի հայտերի ներկայացման ժամկետը դեռևս ավարտված չէ, իսկ Հրավերը հակասում է Օրենքի 3-րդ և 13-րդ հոդվածների պահանջներին, ուստի ղեկավարվելով Օրենքի ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ

կետի և 7-րդ մասի 1-ին կետի «բ» պարբերության պահանջներով՝ Բողոքաբերը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է պարտավորեցնել ՀՀ ոստիկանության կարիքների համար «Ճանապարհային նշանների տեղադրման ծառայությունների» ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ Ո ՀԲՄԾՁԲ-2020-ՃՈ/ՆՇԱՆ-20» ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին չկայացած հայտարարել ՀՀ Ո ՀԲՄԾՁԲ-2020-ՃՈ/ՆՇԱՆ-20» ծածկագրով մրցույթը:

Ի լրումն բողոքի 26.12.2019թ. ներկայացված գրությամբ՝ Արմեն Պետրոսյան Սերյոժայի Ա/Ձ-ն հայտնել է հետևյալը.

1. Ուսումնասիրելով հրավերով սահմանված տեխնիկական բնութագիրը՝ ակնհայտ է դառնում, որ անհրաժեշտ է և՛ ճանապարհային նշանների պատրաստում և մատակարարում, և ճանապարհային նշանների տեղադրում և այս ամենը խմբավորվել է մեկ գնումների միասնական անվանասյունակով նախատեսված CPV կոդի ներքո, այն է՝ 45231213՝ ճանապարհային նշանների տեղադրում:

Այս հանգամանքի հետ կապված Բողոքաբերը հայտնել է հետևյալը. Պատվիրատուի կողմից հայտարարվել է մեկ չափաբաժնից բաղկացած մրցույթ, որի մեջ ներառվել են ճանապարհային նշանների մատակարարում և ճանապարհային նշանների տեղադրում, այնինչ գնումների միասնական անվանասյունակով նախատեսված CPV կոդերի համաձայն՝ վերը նշված գնումները տարանջատվում են առանձին սյունակներով և ունեն առանձին CPV կոդեր՝

-Ճանապարհային նշանների մատակարարում - CPV կոդ 34921410:

-Ճանապարհային նշանների տեղադրում - CPV կոդ 45231213:

Բողոքաբերը գտնում է, որ անթույլատրելի է տարբեր CPV կոդեր ունեցող տարբեր դասակարգիչներ ունեցող միանգամայն տարբեր տնտեսական գործունեությունները միավորել մեկ գնման մրցույթում:

2. Տարբեր CPV կոդեր ունեցող տարբեր դասակարգիչներ ունեցող միանգամայն տարբեր տնտեսական գործունեություններ միավորելով մեկ գնման մրցույթում, Հրավերով միաժամանակ սահմանվել է հետևյալը՝ սույն հրավերով նախատեսված ծառայությունների մատուցման համար պահանջվում են հետևյալ լիցենզիաները՝ «Քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացում» ըստ հետևյալ ոլորտի՝ բնակելի

հասարակական և արտադրական /բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների/:

Վերը նշվածի հետ կապված Բողոքաբերը հայտնել է հետևյալը՝ Պատվիրատուն հրավերով պահանջել է, որ մասնակից Ընկերությունը մասնակցությունն ապահովելու համար պետք է ունենա լիցենզիա՝ «Քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացում» ըստ հետևյալ ոլորտի՝ բնակելի հասարակական և արտադրական, մինչդեռ եթե ուսումնասիրում ենք նույն հրավերով սահմանված տեխնիկական բնութագիրը՝ ակնհայտ է դառնում, որ տվյալ մրցույթի շրջանակում մասնակցի կողմից իրականացվող հիմնական գործողություններն են ճանապարհային նշանների պատրաստումը: Մինչդեռ հարց է առաջանում, թե այս նշանները պատրաստելու համար ինչի համար է պարտադիր «Քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացում» ոլորտի լիցենզիան: Այս պարագայում Պատվիրատուն պարտավոր էր հայտարարել երկու տարբեր մրցույթներ՝ ուղղված ճանապարհային նշանների մատակարարմանը, և առանձին դրանց տեղադրմանը, և երկրորդ մրցույթի դեպքում միայն պահանջվեր համապատասխան լիցենզիան, մինչդեռ չտարանջատելով դրանք, ստացվում է մի իրավիճակ, որ մասնակից Ընկերությունը ճանապարհային նշաններ արտադրելու համար պետք է ունենա «Քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացում» ոլորտի լիցենզիա:

3. Նույն հիմնավորմամբ միավորելով այս երկու տնտեսական գործունեությունները մեկ մրցույթի շրջանակներում՝ պատվիրատուն ընթացակարգի իմաստով նմանատիպ է համարել շինարարական աշխատանքներ՝ Ճանապարհային նշանների տեղադրման ծառայությունները մատուցված լինելը: Մինչդեռ ակնհայտ է, որ ճանապարհային նշաններ արտադրող ընկերությունը նման պայմանագրեր ունենալ չի կարող և համապատասխանաբար դուրս կմղվի տվյալ մրցույթից: Ավելին, եթե անգամ դիտարկենք, որ վերոհիշյալ մրցույթն ուղղված է բացառապես Ճանապարհային նշանների տեղադրման ծառայությունների ձեռքբերմանը և պահանջվում է հետևյալ լիցենզիաները՝ «Քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացում» ըստ հետևյալ ոլորտի՝ բնակելի հասարակական և արտադրական, ապա որպես նմանատիպ պետք է դիտարկվեին ցանկացած շինարարակ աշխատանքների կատարումը՝ տվյալ լիցենզիայի

ներքո կատարված, այլ ոչ թե բացառապես շինարարական աշխատանքներ՝ Ճանապարհային նշանների տեղադրման ծառայությունները:

4. Հրավերի տեխնիկական բնութագրի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մեկ չափաբաժնում միավորվել են առանձին բաղադրիչներ, առանձին տեխնիկական բնութագրեր ունեցող ապրանքատեսակներ: Մինչդեռ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածը իմպերատիվ պահանջում է, որպեսզի առանձին բնութագրեր ունեցող գնումները մեկ գնման գործընթացի շրջանակներում բաժանվեն չափաբաժինների: Ավելին, արգելվում է խմբավորել առանձին բնութագրեր ունեցող գնման առարկաները մեկ չափաբաժնում: Մինչդեռ տվյալ դեպքում առանձին բնութագրեր ունեցող գնման առարկաները միավորվել են մեկ չափաբաժնում:

5. Որպես գնման առարկա է սահմանված նաև սֆերիկ հայելու պատրաստումը և տեղադրումը, մնչդեռ ակնհայտ է, որ սֆերիկ հայելին չի հանդիսանում ճանապարհային նշան, ուստի չի կարող մտնել նման մրցույթի գնման առարկայի մեջ:

6. Ընթացակարգի հրավերով պահանջվում է, որ եռանկյունի նշանը պետք է պատրաստված լինի 0,8մմ հաստությամբ ցինկապատ թիթեղից, բարձր լուսային ինտենսիվություն ունեցող լույս անդրադարձնող Б դասի միկրոպրիզմատիկ փայլաթերթից հումքը՝ ակրիլ, լույս անդրադարձելիությունը՝ ոչ պակաս 60%,

- երաշխիք՝ 10 տարի,
- աշխատանքային ջերմաստիճանը՝ -40°C- +80°C/:

Երաշխիքի 10 տարվա և -40°C- +80°C աշխատանքային ջերմաստիճանի հետ կապված Բողոքաբերը հայտնել է հետևյալը. Պատվիրատուն վերը նշված պահանջների հիմնավորման համար պահանջել է ներկայացնել տեխնիկական բնութագրին համապատասխան վկայագիր, մինչդեռ օրինակ՝ անհասկանալի է, թե ՀՀ-ում երբևէ գրանցվել է -40°C համարժեք սառնամանիք, կամ +80°C համարժեք անմարդկային տաք օրեր, որի պայմաններում Պատվիրատուն հրավերով սահմանել է -40°C- +80°C աշխատանքային ջերմաստիճան՝ դեռ ավելին, պահանջել ներկայացնել նաև համապատասխան վկայագիր, իսկ երաշխիք սահմանել 10 տարի: Բողոքաբերը գտնում է, որ նման պահանջները հիմնավորված չեն և համարժեք չեն Պատվիրատուի կարիքին:

Հաշվի առնելով, որ Ընթացակարգի հայտերի ներկայացման ժամկետը դեռևս ավարտված չէ, իսկ Հրավերը հակասում է Օրենքի 3-րդ և 13-րդ հոդվածների պահանջներին, ուստի ղեկավարվելով Օրենքի ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի և 7-րդ մասի 1-ին կետի «բ» պարբերության պահանջներով՝ Բողոքաբերը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին կրկին խնդրել է պարտավորեցնել ՀՀ ոստիկանության կարիքների համար՝ «Ճանապարհային նշանների տեղադրման ծառայությունների» ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ Ո ՀԲՄԾՁԲ-2020-ՃՈ/ՆՇԱՆ-20» ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին չկայացած հայտարարել տվյալ գնման ընթացակարգը:

Արմեն Պետրոսյան Սերյոժայի Ա/Ձ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 25.12.2019թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են վերոհիշյալ դիրքորոշումը:

2. ՀՀ ոստիկանության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

ՀՀ ոստիկանության կողմից Արմեն Պետրոսյան Սերյոժայի Ա/Ձ-ի ներկայացրած բողոքի վերաբերյալ որևէ դիրքորոշում չի ներկայացվել:

ՀՀ ոստիկանությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 25.12.2019թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. «Ուկռինվեստ» ՍՊԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

«Ուկռինվեստ» ՍՊԸ-ն 25.12.2019թ. միջնորդություն է ներկայացրել ԳԲՔԱ-ՆԳ-2019/94 բողոքով երրորդ կողմ ներգրավելու վերաբերյալ:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից ընկերության միջնորդությունը բավարարվել է:

Միևնույն ժամանակ «Ուկռինվեստ» ՍՊԸ-ն 25.12.2019թ. ներկայացրել է դիմում, որով հրաժարվել է ԳԲՔԱ-ՆԳ-2019/94 բողոքով երրորդ կողմ ներգրավված լինելուց:

4. ԳԲՔԱ-ՆԳ-2019/94 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲՔԱ-ՆԳ-2019/94 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ ոստիկանության կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՀՀ Ո ՀԲՄԾՁԲ-2020-ՃՈ/ՆՇԱՆ-20» ծածկագրով հրատապ բաց մրցույթ:

2. Ընթացակարգի հրավերով հաստատվել է գնման առարկայի տեխնիկական բնութագիրը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով Արմեն Պետրոսյան Սերյոժայի Ա/Ձ-ի կողմից 19.12.2019թ. ներկայացված բողոքը, այդ թվում՝ 26.12.2019թ. ի լրումն բողոքի ներկայացված գրությունը, «ՀՀ Ո ՀԲՄԾՁԲ-2020-ՃՈ/ՆՇԱՆ-20» ծածկագրով հրատապ բաց մրցույթի հրավերը, գտնում եմ, որ բողոքն անհիմն է և ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ և 5-րդ մասերի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ

նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը և մասնակիցների որակավորման հատկանիշների գնահատմանը ներկայացվող չափանիշները սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ՝ բացառությամբ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված պայմաններով գնում կատարելու դեպքերի:

ՀՀ ոստիկանության կողմից իր կարիքների համար ճանապարհային նշանների տեղադրման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ Ո ՀԲՄԾՁԲ-2020-ՃՈ/ՆՇԱՆ-20» ծածկագրով հրատապ բաց մրցույթ:

Գնման առարկան ներառվել է գնումների միասնական անվանացանկի «45231213» (ճանապարհային նշանների տեղադրում) միջանցիկ ծածկագրի տակ, որն իր հերթին ներառված է «45200000» (շենքերի, շինությունների կամ դրանց մասերի կառուցման աշխատանքներ) խմբում:

Ընթացակարգի հրավերով հաստատվել է գնման առարկայի տեխնիկական բնութագիրը:

Ընթացակարգի տեխնիկական բնութագիրն իր մեջ ներառում է ճանապարհային նշանների պատրաստում և ճանապարհային նշանների տեղադրում:

Ընթացակարգը կազմակերպվել է մեկ չափաբաժնով:

Ընթացակարգի հրավերով պահանջվել է ««Քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացում» ըստ հետևյալ ոլորտի՝ բնակելի հասարակական և արտադրական/բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների/» լիցենզիա:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի համաձայն՝

1. Մրցակցային գնման ձևերի կիրառման ժամանակ առանձին բնութագրեր ունեցող գնումները մեկ գնման գործընթացի շրջանակներում կարող են բաժանվել չափաբաժինների: Արգելվում է՝

1) մեկ գնման առարկան բաժանել առանձին չափաբաժինների՝ մրցակցային գնման ձևի կիրառումից խուսափելու նպատակով.

2) փոփոխել պայմանագրով նախատեսված ապրանքների, աշխատանքների և ծառայությունների բնութագրերը:

2. Արգելվում է խմբավորել առանձին բնութագրեր ունեցող գնման առարկաները մեկ չափաբաժնում, բացառությամբ այն դեպքերի, երբ պատվիրատուն հիմնավորում է նման խմբավորման անհրաժեշտությունը:

Ուսումնասիրելով «ՀՀ Ո ՀԲՄԾՁԲ-2020-ՃՈ/ՆՇԱՆ-20» ծածկագրով հրատապ բաց մրցույթի հրավերը՝ չափաբաժինների բաժանելու անհրաժեշտության տեսանկյունից, գտնում եմ, որ Ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի պահանջներին պահպանմամբ, քանի որ տվյալ դեպքում խոսքը չի վերաբերում առանձին տեխնիկական բնութագրեր ունեցող գնման առարկաներին, այլ Ընթացակարգի տեխնիկական բնութագիրը կազմված է մեկ գնման առարկայի վերաբերյալ, որն ունի նույն բնութագիրը և տվյալ գնման գործընթացի շրջանակներում գնման առարկան առանձին չափաբաժինների բաժանելը կարող է հանգեցնել գնման գործընթացի արհեստական ուռճացման, ինչպես նաև հետագայում պայմանագրային պարտավորությունների կատարման հետ կապված հնարավոր ռիսկերի առաջացմանը, հաշվի առնելով, որ գնման գործընթացի արդյունքում պետք է կնքվի երկու պայմանագիր, եթե հաղթող են ճանաչվում երկու տարբեր մասնակիցներ: Եվ տվյալ դեպքում Բողոքաբերի կողմից վկայակոչված այն փաստը, որ ըստ էության ճանապարհային նշանների տեղադրումը ներառված է գնումների միասնական անվանացանկի այլ միջանցիկ ծածկագրի («45231213») տակ, իսկ

ճանապարհային նշանների մատակարարումն այլ («34921410») միջանցիկ ծածկագրի տակ, ուստի մեկ գնման առարկայի շրջանակներում միավորվել են տարբեր CPV կոդեր ունեցող գնման առարկաներ, ապա այս տեսանկյունից հայտնում եմ, որ Ընթացակարգի հրավերով պահանջվել է ճանապարհային նշանների տեղադրում, որն իր մեջ ներառում է նաև ճանապարհային նշանների պատրաստում, իսկ Բողոքաբերի կողմից վկայակոչված ճանապարհային նշանների մատակարարումն իր հերթին նույնպես ենթադրում է պատվիրատուի կարիքին և սահմանված հատկանիշներին համապատասխանող ճանապարհային նշանների պատրաստում, որից հետո միայն մատակարարում: Հետևաբար տվյալ դեպքում ճանապարհային նշանների տեղադրումն ենթադրում է ի սկզբանե պատվիրատուի կարիքին համապատասխան սահմանված պահանջներին համապատասխանող նշանների պատրաստում (առկայություն), որից հետո՝ տեղադրում: Առաջինը հանդիսանում է երկրորդի անբաժանելի մասը, ուստի դրանք չեն կարող համարվել տարբեր բնութագրեր ունեցող գնման առարկաներ:

Անդրադառնալով Բողոքաբերի կողմից բողոքով նշված երկրորդ հիմքին՝ հայտնում եմ հետևյալը.

Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի

բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Վերոհիշյալ նորմերի վերլուծությունը ցույց է տալիս, որ տեխնիկական բնութագիրը պետք է լինի հնարավորինս հստակ՝ ներառելով գնման առարկայի բոլոր հատկանիշները և միակ պայմանն այն է, որ տեխնիկական բնութագիրը չպետք է պահանջ կամ հղում պարունակի որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց, իսկ հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Դրա հետ մեկտեղ գնումների և գնումների գործընթացի իրականացման կարևորագույն սկզբունքներից է հանդիսանում գնման արդյունավետ և օգտավետ իրականացումը, հետևաբար պատվիրատուի կողմից իրականացվող գնումը պետք է լիարժեք համապատասխանի վերջինիս գնման պահանջին և ապահովվի պատվիրատուի այն կարիքի բավարարումը, որի նպատակով կազմակերպվել է նշված գնումը և միևնույն ժամանակ չհակասի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ և 13-րդ հոդվածների պահանջներին:

Ուսումնասիրելով Ընթացակարգի տեխնիկական բնութագիրը՝ գտնում եմ, որ այն կազմված է գնումների մասին ՀՀ օրենսդրության համապատասխան և չի հակասում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածով սահմանված՝ տեխնիկական բնութագրի կազմմանը ներկայացվող պահանջներին:

Մասնավորապես՝ հրավերով սահմանվել են ճանապարհային նշանների չափերին, պատրաստման նյութին և այլ հատկանիշներին վերաբերող պահանջներ, ինչպես նաև այլ (այդ թվում՝ աշխատանքային ջերմաստիճանին, երաշխիքային ժամկետին, անդրադարձելիության և այլն) հատկանիշներին վերաբերող միաջակայքեր, նվազագույն և առավելագույն շեմեր, ճանապարհային նշանների տեղադրման այլ պայմաններ, որոնք խտրական չեն և հղում չեն կատարում որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ

արտադրողին, ուստիև նման պայմաններում չի խախտվում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի, ինչպես նաև Օրենքի 3-րդ հոդվածի պահանջները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Արմեն Պետրոսյան Սերյոժայի Ա/Ձ-ի կողմից 19.12.2019թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**